

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՆՈՐԻՑ ՍԱՐԳՍԻՍ ՎԱՐՇԱՄՅԱՆՑԻ ՆԱԽԱԿԻ ԱՌԹԻՎ

Բաճախիչ. գիտ. քննաձու Մ. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

«Պատմա-բանասիրական հանդեսի» 1964 թ. № 3-ում բանասիրական գիտությունների թեկնածու Ռուզան Նանումյանը հանդես եկավ «Մի կտրևոր փաստի վերականգնում» հոդվածով, որով ճշգրտում էր նալբանդյանագիտության առեղծվածներից մեկը: Խոսքը վերաբերում է Սարգիս Տեր-Միքայելյան Վարշամյանցի նամակին, որը հրապարակվել է «Հյուսիսսփայլ» ամսագրում 1860 թ.: Ինչպես հայտնի է, նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի խմբագրությունը, մտացածին համարելով թե՛ Վարշամյանց ազգանունը, թե՛ վայրի անվանումը (Փայտակարան), որտեղից ուղարկված էր նամակը, այն համարել է նալբանդյանի գրչի արգասիքը և ժամանակին մտցրել նրա երկերի մեջ¹:

Ռ. Նանումյանը վերոհիշյալ հոդվածում հաստատում էր Վարշամյանցի ինքնությունը իբրև ռեալ անձնավորության և նրան անվերապահորեն համարում Կոմս էմմանուելին՝ Մ. Նալբանդյանին ուղղված նամակի հեղինակը:

Վարշամյանցի նամակի բազմակողմանի ուսումնասիրությունը և դրան առնչվող փաստերը, սակայն, մեզ բերում են այն հետևության, որ հիմնականում իրավացի էին Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի հրատարակիչները, որոնք, հենվելով նամակի մի շարք առանձնահատկությունների վրա («ընդհանուր շունչը, նամակագրի լեզուն և ոճը, տեղ-տեղ պոլեմիկական տոնը և այլն»)², այն համարել են Նալբանդյանի ստեղծագործությունը:

Իսկ ինչպես վարվել Ռ. Նանումյանի բերած փաստարկների հետ, որոնց համաձայն Վարշամյանց ազգանունով գործիչ իսկապես ապրել է Բաքվում, 1864 թ. հետո եղել է տեղի Մարդասիրական ընկերության գործունյա անդամներից մեկը, վարել է այդ ընկերության ատենադպրի պաշտոնը, 1870—1880 թթ. թղթակցել է «Մշակին» և նույնիսկ հեղինակ է մի բրոշյուրի: Նա, հավանաբար, զբաղվել է և գրական աշխատանքով. «Մեղու Հայաստանի» թերթում զետեղված է Կոխլովի «Ազոավ և աղվես» առակի նրա թարգմանությունը, կատարված ժամանակի համար բավականաչափ կազմակերպված գրական լեզվով³:

Այսպիսով, ըստ Ռ. Նանումյանի, Սարգիս Վարշամյանցը միանգամայն ռեալ անձնավորություն է և հավանական պետք է համարել, որ նա իրոք, նա-

1 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. II, Երևան, 1948, էջ 296—301:

2 Նույն տեղում, էջ 434:

3 Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1860, № 36, էջ 288:

մակ է ուղղել «Հյուսիսսփայլի» խմբագրությունը (կամ Կոմս էմմանուելին), թերևս խնդրելով բացատրություն տալ գրական նոր լեզվի զարգացման հարցում ժամանակի պարբերականների դիրքորոշման վերաբերյալ:

Ս. Վարշամյանցի 1860 թ. օգոստոսի 12-ի թվակիր նամակը լույս տեսավ «Հյուսիսսփայլի» նույն թվականի № 11-ում (էջ 384—396): Մուտքի խոսքում նամակի հեղինակը ընդհանրացնող գնահատական է տալիս «Հյուսիսսփայլ» ամսագրի գործունեությանը, դրա հետ կապելով հայ նոր գրականության սկզբնավորումը, «կենդանի աղբի մեջ կենդանի լեզվով խոսելու և գրելու» իրողությունը: Նամակագիրն այնուհետև այն միտքն է հայտնում, թե «Հյուսիսսփայլը» պարտավոր է հսկել և մյուս թերթերի լեզվի մաքրությանը, անաչառ խոսք ասել դրանց արժանիքների և թերությունների մասին: Հիմնական հարցը, սակայն, որ հուշում է Վարշամյանցին, Մսերյանների լեզվական քաղաքականությունն է, նրանց ամսագրի անկանոն լեզուն: «Ճռաքաղը», նշում է նամակագիրը, «աշխարհաբար լեզուն շինել է տիրացուի շիլափլավ կամ ուսուց սլահոց (սլասլա) վինեգրետ»⁴: Նամակագիրը շեշտում է, որ հարյուրավոր պարզամիտ ընթերցողներ կարող են ապակողմնորոշվել՝ կարդալով «Ճռաքաղը» և Մսերյանների հեղինակությանը հետևելով, նմանվել նրանց ամսագրի լեզվին, աղավաղել աշխարհաբարը: Վարշամյանցը խնդրում է Կոմս էմմանուելին՝ տպագրել իր նամակը և համապատասխան ծանոթություններով զգուշացնել ընթերցողներին՝ հեռու մնալ «Մսերյանների մատենագրական հերձվածից»:

Նամակում բարձրացվում է ևս մեկ գործնական հարց. Մսեր Մսերյանը 1856 թ. կաղարյանների տոհմի պատմությունը գրելով գրաբար լեզվով, իր այդ քայլը բացատրում էր գրաբարի արժանիքներով և աշխարհաբարն անվանում «անհամ, թույլ, տգեղ և անհեթեթ»: Այնինչ, երկու տարի դրանից հետո, նույն Մսերյանը «Ճռաքաղը» հրատարակում է աշխարհաբար և այն էլ աշխարհաբարի այնպիսի մի աղավաղված ձևով, որն իսկապես «անհամ» էր, «թույլ» և «տգեղ»: Խնդիրն այն է, գրում է նամակի հեղինակը, որ եթե աշխարհաբարը դեռևս չունի իր քերականությունը, այդ չի նշանակում, թե կարելի է գրել՝ ինչպես պատահի, առանց հետևելու ուղղախոսական կանոններին: Ընդհակառակն, ավելի դժվար է գրել այդ լեզվով, քանի որ աշխարհաբարը կենդանի լեզու է և ողջ ազգը կարող է հանդես գալ գրողի դատավորի դերում:

Վարշամյանցի նամակի տպագրությունից անմիջապես հետո, հնարավորություն չունենալով իսկույն պատասխանել հոդվածին, Մսերյանները շտապում են իրենց վերաբերմունքը «Հյուսիսսփայլի» խմբագրության նկատմամբ արտահայտել գոհիկ մի քառատողով, որով ոչ միայն հայհույում էին Նալբանդյանին և Նազարյանին, այլև քառատողին կցված բնաբանով ոչնչացնում էին նրանց վաստակը: Ահա այդ քառատողը:

Առ գովն շրթավր:

Տիրացուի շիլափլավ,

Վարդապետի քալափաշե...:

Յայս երկուքից թե ո՞րն է լավ:

Ճաշակառուն քաջ ճանաչե՛:

⁴ Մ. Նալբանդյան, ԵԺԺ, հ. II, էջ 296:

⁵ «Ճռաքաղ», 1860, № 9, էջ 143:

Տողատակի ծանոթությունը բացահայտելով «շիլա-փլավ» բառի աղբյուրը («Ի «Հյուսիսսփայլն» 1860 ամի, ամսատետր 11, էջ 385»), Մսերյանները մեկ անգամ ևս հավաստում էին, որ քառատողն ուղղված է «Հյուսիսսփայլի» գործիչների գեմ:

Մեկ ամիս անց «Ճռաքաղում» տպագրվում է Զարմայր Մսերյանի «Դարձված բանից առ Սարգիս Տեր-Միքայելյան Վարշամյանց» հոդվածը՝ ուղղված Ս. Վարշամյանցի դեմ, որից երևում է, որ այդ պահին Մսերյանները Վարշամյանցին էին համարում նամակի հեղինակը⁶: Զ. Մսերյանը կշտամբում է Վարշամյանցին այն բանի համար, որ նա «Ճռաքաղի» լեզվի մասին իր դատողությունները Մսեր Մսերյանին հայտնելու փոխարեն հոդվածն ուղարկել է նրա հակառակորդների պարբերաթերթին՝ շահելու համար Նաղարյանի սերը և աչքի առաջ ունենալով անձնական օգուտը:

Այնուհետև իրադարձությունները հաջորդում են միմյանց, Բաքվում ստացվում են «Հյուսիսսփայլի» և «Ճռաքաղի» համարները, որոնց նյութերին ծանոթանալով, «Ճռաքաղի» Շամախիի գործակալ, բժիշկ Դավիթ Ռոստոմյանցը իր և Ս. Վարշամյանցի անունից մի նամակով դիմում է Մսերյաններին և հայտնում, թե «Հյուսիսսփայլում» տպագրված նամակի համար Վարշամյանցը պատասխանատվություն չի կրում: Քանի որ Ռոստոմյանցի նամակը մեզ չի հասել, դիմենք Զ. Մսերյանին, որը վերաշարադրում է այդ շատ կարևոր նամակի բովանդակությունը: Վարշամյանցին ուղղած՝ 1861 թ. հունվարի 18-ի նամակում Զ. Մսերյանը գրում է, որ Ռոստոմյանցի՝ դեկտեմբերի 23-ի նամակի «միջին իմացաք՝ թե «Հյուսիսսփայլի» 11-րդ տետրակում տպագրված Ձեր ստորագրությամբ նամակը՝ բնավին Ձերը չէ՞, և թե՞ նորա մեջ չկան ո՛չ Ձեր բառերը, և ո՛չ Ձեր իմաստը, որո վասն և խնդրում եք ներողամտություն» (ընդգծումը Զ. Մսերյանինն է)⁷:

Այս նույն նամակում Մսերյան-որդին առաջարկում է Վարշամյանցին մամուլի էջերում հրապարակել ճշմարտությունը, այլապես, գրում է նա, ինքը կշարունակի իր հոդվածի տպագրությունը, բնականաբար ուղղված նրա դեմ, ում ստորագրությամբ տպագրվել էր նամակը: Մինչ այդ Զ. Մսերյանը «Ճռաքաղում» մի ծանուցում էր հրապարակել, որով հայտնում էր, թե առժամանակ դադարեցնում է իր «Դարձված բանից...» հոդվածի շարունակության տպագրությունը, մինչև ստանա Սարգիս Վարշամյանցին ուղղված իր նամակի պատասխանը՝ «ի մասին նորա ստորագրությամբ տպյալ նամակին»⁸:

Սարգիս Վարշամյանցը, որը, պետք է ենթադրել, դիտեր «Հյուսիսսփայլի» արժեքը, Մսերյանի պահանջն անպատասխան է թողնում: Հավաստիանալով, որ Վարշամյանցը չի ցանկանում հանդես գալ «Հյուսիսսփայլի» դեմ, մայիսի սկզբին Զ. Մսերյանը տպագրում է «Դարձված բանից...» հոդվածի շարունակությունը: Ի դեպ, հոդվածը թեև նախատեսված էր շորս բաժնից, մնում է անավարտ:

Զարմայր Մսերյանի հոդվածի երկրորդ հատվածը մարտական մի ելույթ է «Հյուսիսսփայլի» խմբագրության դեմ և իրենից ներկայացնում է Մսեր Մր-

⁶ «Ճռաքաղ», 1861, № 13:

⁷ Նույն տեղում, № 20, էջ 331:

⁸ Նույն տեղում, № 15, էջ 25:

սերյանի լեզվագիտական դրույթների պարզաբանումն ու պաշտպանությունը: Այս հոգվածում ուշադրության արժանի են երկու հարցադրումներ. առաջինն այն է, որ Զարմայր Մսերյանը իր հոր հետևողությամբ աշխարհիկ լեզուն համարում է «անհամ», «թուլ», «անհեթեթ», «գեղջուկ» և «գոհհիկ»: Երկրորդ խնդիրը, որը տվյալ դեպքում մեծ կարևորություն է ձեռք բերում՝ նամակի հեղինակի ինքնության վերաբերյալ նրա ակնարկներն են, որոնց կանդորդառնանք ստորև:

Զ. Մսերյանի երկրորդ հոգվածով ավարտվում է Վարշամյանցի նամակի տպագրության և դրա շուրջն առաջացած իրարանցման պատմությունը, բայց հենց այստեղից էլ ծագում է ամենամեծ առեղծվածը. ո՞վ էր նամակի հեղինակը:

Ռ. Նանումյանը անվերապահորեն Վարշամյանցին համարելով Կոմս էմմանուելին ուղղված նամակի հեղինակը, հիմնականում հենվում է հետևյալ կուլանների վրա.

ա) Սարգիս Տեր-Միքայելյան Վարշամյանցը մտացածին անուն չէ: Նա Բաքվի հասարակական գործիչներից էր և իր զարգացման մակարդակով ընդունակ՝ գրելու «Հյուսիսսփայլում» տպագրված նամակը:

բ) «Նամակում կա պատշաճ հարգանքի տոն Մսերյանցի անձի և նրա վաստակների նկատմամբ», մի բան, որ անհարիր է Նալբանդյանի խառնվածքին:

գ) Նամակը թվագրված է օգոստոսի 12-ին, երբ Նալբանդյանն արդեն գտնվում էր Նոր Նախիջևանում: Ուստի՝ «Վարշամյանցի նամակը չէր կարող Նալբանդյանի ձեռքն ընկած լինել»: Եվ քանի որ նամակն ուղղված էր Կոմս էմմանուելին, Նազարյանը ոչ միայն խմբագրել է Վարշամյանցի նամակը, այլև «հանդես է եկել նաև Կոմս էմմանուելի անունից»:

դ) Աշխարհաբարի գնահատականի հարցում Նալբանդյանի հայացքները չեն ներդաշնակում Վարշամյանցի նամակի թեզերին:

Այս փաստարկներին հետևում է հեղինակի եզրակացությունը. «...գրտնում ենք, որ այդ նամակը կապ չունի Նալբանդյանի անվան հետ: Նա սլատկանում է Վարշամյանցին և հարկ է ուղղել սխալը, հանելով այն Նալբանդյանի երկերի ժողովածուի երկրորդ հատորից»⁹:

Ընդունելով հանդերձ Ռ. Նանումյանի հոգվածի արժանիքները՝ մասնավորապես Վարշամյանցի անձի հետ կապված փաստերի հրապարակման առումով, մենք, այնուամենայնիվ, կփորձենք վիճարկել նրա առաջ քաշած փաստարկների հավանականության խնդիրը:

Մեր կարծիքով Ս. Վարշամյանցը չէր կարող լինել Կոմս էմմանուելին ուղղված նամակի հեղինակը, և ահա թե ինչու: 1860 թ., երբ հրապարակվում է հիշյալ նամակը, Վարշամյանցը դեռևս չէր դրսևորել իրեն գրական-հասարակական աշխատանքների ասպարեզում. նա ընդամենը «Մեղու Հայաստանի» թերթում տպագրել էր «Ազոավն ու աղվեսը» առակի թարգմանությունը: Անգամ Զ. Մսերյանը իր առաջին հոգվածում անուղղակիորեն հայտնում էր, որ նա անհայտ անուն է գրական աշխարհում (գրելով այդ նամակը, շեշտում է

9 «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 3, էջ 195:

Մսերյանը, «կամեցար նորանով նախ՝ հայտնի անել, մեր ազգին՝ քո մինչև ցայժմ մատենագիտության ասպարեզի մեջ անհայտ մնացած անունը և անձը»¹⁰։

Բայց այս՝ հարցի մեկ կողմն է։ Ուշագրավ է և այն, որ նամակը թե՛ բարձրացված տեսական հարցերի, թե՛ կառուցվածքի, թե՛ լեզվաոճական առանձնատկությունների առումով կապվում է «Հիշատակարանի» հետ, մատնում դրանց հեղինակների նույնության փաստը։ Նամակի մուտքի խոսքը, որտեղ տրվում է «Հյուսիսսփայլի» գնահատականը և նշվում նրա վաստակը հայ նոր գրականության զարգացման գործում, Նալբանդյանի՝ նույն հարցին նվիրված գնահատականների մի նոր արտահայտություն է¹¹։

Նամակում քննության առարկա են դառնում ժամանակի հյուսիսսփայլյան շրջանակի լուսավորիչներին հուզող՝ աշխարհաբարի և գրաբարի փոխհարաբերության, հայերեն խոսակցական լեզվի և գրաբարի զարգացման օրինաչափությունների հետ կապված հարցերը, որոնց գիտական քննությունը հազիվ թե կարող էր մատչելի լինել ամսագրի շաբաթյին մի թղթակցի։

Այնուհետև, նամակը շաղախված է նուրբ հումորի երանգով և երգիծական արտահայտություններով, որոնք որոշակի հարցերի կապակցությամբ շարունակաբար կրկնվելով, զգալիորեն ուժեղացնում են հեղինակային խոսքի ներգործուն ուժը։ Զուտ հրապարակախոսական մի հնարան է այս, որը հատուկ էր միայն Նալբանդյանի գրելաձևին։

Նամակագիրը ուշադրություն է դարձնում այն հարցի վրա, որ Մսերյանները ծրագրել էին ընդհատված «Ճռաքաղի» հրատարակությունը վերսկսել տարվա կեսին։ Նրանց այդ վճիռը, որն ուղիղ գծով կապվում էր բաժանորդներ ձեռք բերելու խմբագրության ճիգերի հետ և արժանանում է նամակագրի ծաղրին, ինքնին խոսում է այն մասին, որ հարցի նկատմամբ այդպիսի վերաբերմունք կարող էր ցույց տալ մեկ այլ խմբագրություն։ Բաժանորդների առումով «Հյուսիսսփայլին» նույնպես բախտը չէր ժպտում, ուստի տրամաբանական է, որ նրա խմբագրությունը նկատեն ճռաքաղցիների փոքրիկ խորամանկությունը։ Մինչդեռ Վարշամյանցին կամ շաբաթյին մեկ այլ գործչի հազիվ թե հետաքրքրեր այն, թե «Ճռաքաղը» օգոստոսի՞ց արդյոք, թե հունվարից պետք է սկսի հրատարակվել։

Ռ. Նանումյանի այն կարծիքը, թե Մսերյաններն իրենց քառատողում և այլ գրություններում Վարշամյանց ազգանվան տակ նկատի են ունեցել իրենց թերթի Բաքվի բաժանորդ Ս. Վարշամյանցին, կարիք ունի որոշ պարզաբանումների։ Ըստ Ռ. Նանումյանի՝ «Ճռաքաղում» զետեղված քառյակում ակնարկ չկա Նալբանդյանի հասցեին և այն, ինչպես և Մսերյանի առաջին հոդվածը, ուղղված է Վարշամյանցի դեմ։ Հոդվածն, իսկապես, ուղղված է Վարշամյանցի դեմ, բայց քառյակը բացառապես հասցեագրված է «վարդապետ» Նազարյանին և «տիրացու» Նալբանդյանին (հիշենք վերջինիս գործունեության բնույթը՝ նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հոգևոր թեմի առաջնորդարանում)։

Ժամանակին մենք հրապարակել ենք Մսերյանների արխիվում եղած մի ձեռագիր բանաստեղծություն, որը վերագրել ենք Զարմայր Մսերյանին։ Պաս-

¹⁰ «Ճռաքաղ», 1861, № 13, էջ 218։

¹¹ Տե՛ս Մ. Նալբանդյան, ԵԺԺ, հ. II, էջ 296 և հ. I, էջ 386։

կվիլային այդ բանաստեղծության մեջ Վարչամյանց ազգանունը, մեր խորին համոզմունքով, վերաբերում է Նալբանդյանին, թեև Ռ. Նանումյանը մեղադրվում է այդ հարցում: Ահա խնդրո առարկա բանաստեղծության առաջին քառատողը.

Ձարին ծնունդ՝ Նաղարյանց
 'ի շարության գերազանց,
 Եվ քո ընկեր Վարչամյանց
 Լիրբ է նման հաջող շանց¹²:

Յյա առումով հետաքրքրական է Ձ. Մսերյանի մի արտահայտությունը նրա առաջին հոդվածում: Այստեղ նա հանդիմանում է Վարչամյանցին, որն իր նամակը ուղղել էր «Հյուսիսսահայկին», «քաջ գիտենալով՝ «Հյուսիսսահայկ» թերթերի միջից պ. Նաղարյանցի և նորա ընկեր՝ Կոմսի թշնամությունն, նախանձն և ատելությունն առ իմ հայրն»¹³: Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնպես, ինչպես և վերը հիշված բանաստեղծության մեջ, Կոմսը մատնանշվում է իբրև Նաղարյանի ընկերը: Մեր կարծիքով, հազիվ թե առաջին անգամ «Հյուսիսսահայկին» նամակ ուղարկած մի թղթակից հորջորջվեր Նաղարյանի ընկեր և նրա հետ մեկտեղ կատաղի կերպով քննադատվեր Ձ. Մսերյանի պասկվիլային բանաստեղծության մեջ:

Իր երկրորդ հոդվածում Ձ. Մսերյանը, որ մի քանի ամիս ժամանակ էր ունեցել ուսումնասիրելու խնդիրը, արդեն որոշակիորեն խոսում է երրորդ անձնավորության մասին, բացառելով Նաղարյանի և Վարչամյանցի՝ նամակի հեղինակ լինելու հնարավորությունը: Այսպես, նա գրում է. «Նախընթաց հոդվածիս մեջ ցույց տվեցի ես պ. Վարչամյանց, քո՝ կամ քո անունով ստորագրված՝ մեզ և բազմաց հայտնի հեղինակի իսկական կամքը և նպատակը»¹⁴: Նույն նամակի այլևայլ հատվածներում դարձյալ դիմելով Վարչամյանցին, նա գրում է. «Աստված կյանք և կարողություն տա ձեզ, պ. Վարչամյանց, և ձեզ, պ. Թա՛գ կացած հեղինակ», կամ «պ. Վարչամյանցը և նորա փառուղար հեղինակը», «պ. Վարչամյանցը և նորա Թագ կացած ընկերը» (ընդգծումները մերն են—Մ. Մ.):

Եթե նկատի առնելու լինենք այն հանգամանքը, որ «Հյուսիսսահայկ» շրջանակի գործիչների մեջ այդ օրերին Նալբանդյանից բացի չկար մեկը, որին «Ճոսաբաղի» խմբագրությունը «մեծուքեր» «բազմաց հայտնի հեղինակ» անվանումով, ապա պարզ կդառնան Ձարմայր Մսերյանի ակնարկները՝ նամակի «Թագ կացած հեղինակի» հասցեին:

Ձարմայր Մսերյանն ապրում էր Մոսկվայում և ակնդետ հետևում «Հյուսիսսահայկ» խմբագրության քայլերին: «Մեղու Հայաստանի» թերթում տպագրված նրա հոդվածների մեջ սպորդել են արտահայտություններ, որոնցից պարզվում է, որ Մսերյանները զանազան ճանապարհներով տեղեկություններ էին ձեռք բերում «Հյուսիսսահայկ» խմբագրության ներքին գործերի վերաբերյալ¹⁵: Ձ. Մսերյանը հազիվ թե սխալվեր Վարչամյանցի ստորագրությունը կրող նամակի հեղինակի ինքնությունը հայտնաբերելու հարցում, ուստի հարկ է, որ մենք շեղեազնահատենք նրա կարծիքները:

¹² Մ. Մխիթարյան, «Հյուսիսսահայկ» ամսագիրը, Երևան, 1958, էջ 53:

¹³ «Ճոսաբաղ», 1861, № 13, էջ 218:

¹⁴ Նույն տեղում, № 22, էջ 358:

¹⁵ Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1860, № 17, 32:

Մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ շենք կարող հաշվի չառնել և մեզ հասած ամենահավաստի վկայությունը՝ Դավիթ Ռոստոմյանցի տված բացատրությունը Մսերյաններին. մի բան, որ Ռ. Նանումյանը սոսկ հիշատակել է՝ առանց անհրաժեշտ հետևություններին:

Ռ. Նանումյանը հայտնում է այն միտքը, թե նամակի հեղինակը քննադատելով հանդերձ Մ. Մսերյանի աշխարհաբար լեզուն, բարձր է գնահատում նրա գրաբար վաստակը. Նալբանդյանը չէր կարող, գրում է Ռ. Նանումյանը, «գլուխ խոնարհել և գովասանքի խոսքեր շռայլել այնպիսի հակառակորդի հասցեին, որի գործունեության նկատմամբ նա ուներ իր որոշակի բացուսական կարծիքը»¹⁶: Մանոթանանք «գնահատականի» այդ խոսքին: Ամենախիստ քննադատության ենթարկելով Մսեր Մսերյանի աշխարհաբար լեզուն և առհասարակ «ճռաքաղը» համարելով «և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի ավերիչ», հոգևածագիրը վերջում ավելացնում է. «Թող գերապատիվ մագիստրոսը ներե մեզ վեհանձնաբար, մեր կարծիքը հրապարակելու համար նրա աշխարհաբար լեզվի վերա: Մեք ոչ միայն ոչինչ թշնամություն, ոչինչ ատելություն և նախանձ չունինք դեպի նա, այլ դորա հակառակ և սիրող ենք նորա գրաբար աշխատասիրութեններին»¹⁷ (ընդգծումը մերն է—Մ. Մ.): Նալբանդյանը իր «Հիշատակարանում» սիրո նման զեղումներ է շռայլում «Հյուսիսափայլի» երգվյալ հակառակորդ, մանկավարժ Մ. Իսահակյանցի նկատմամբ, որին Շահբեգը նույնիսկ պատրաստվում էր իր զավակների կնքահայրը դարձնել: Նամակի հեղինակը դիմում է նույն հնարանքին. հեգնական ձևով սեր է բացատրում հակառակորդին... Բայց ահա, ինչպես և «Հիշատակարանում», հեղինակը կտրուկ շրջադարձ է կատարում: Նա հրաժարվում է Իսահակյանցին կնքահայր դարձնելու մտքից, իսկ նամակում՝ Մսերյանին խորհուրդ է տալիս «մեր սիրելի ազգի օգտի համար» հրաժարվել աշխարհաբարից և հին բարբառով օգուտ բերել «սուրբ եկեղեցվո չայաստանյայց և լուսածնունդ զավակաց նորին»¹⁸: Ի դեպ, վերջին արտահայտությունը վերցված է «Ճռաքաղի» հայտարարությունից, որտեղ ասված էր, թե խմբագրությունը ամսաթերթի հրատարակությունը հանձն է առել «հատկապես ՚ի փառս սուրբ եկեղեցվո չայաստանյայց, և ի հոգեշահ զբոսանս լուսածնունդ զավակաց նորին»: Մեր կարծիքով այս ամենը շատ հեռու է հակառակորդի հասցեին «գովառանական խոսք» լինելուց:

Ռ. Նանումյանի հաջորդ փաստարկն այն է, թե Վարշամյանցի նամակը թվագրված է 1860 թ. օգոստոսի 12-ին, հետևապես մինչև այն հասներ Մոսկվա, չէր կարող ընկնել Նալբանդյանի ձեռքը: Նանումյանի կարծիքով նամակը խմբագրել է Նազարյանցը, դրան տալով «իր ընդհանուր շունչը և պոլեմիկական ինքնատիպ ոճը»: Ինչ վերաբերում է Նալբանդյանի ստորագրությունը կրող տողատակի ծանոթություններին, ապա «պետք է ենթադրել,— գրում է Նանումյանը,— որ Նազարյանը հանդես է եկել նաև Կոմս էմմանուելի անունից, քանի որ նամակը ուղղված է եղել նրան»¹⁹:

¹⁶ Ռ. Նանումյան, նշվ. աշխ., էջ 189:

¹⁷ «Հյուսիսափայլ», 1860, № 11, էջ 396:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Ռ. Նանումյան, նշվ. աշխ., էջ 195:

Ամեն բանից առաջ ամսաթիվը կարող էլ մտացածին լինել: «Հյուսիսափայլի» պատմությունից մեզ հայտնի են փաստեր, երբ Նալբանդյանը, գտնվելով Մոսկվայում, ամսագրում տպագրված նամակի տակ իբրև գրության վայր նշել է Փարիզը և կամ գտնվելով Լոնդոնում, նամակն ուղարկել է իբր Բեռլինից: Երբեմն ետ ու առաջ է տարել ամսաթվերը և այլն: Ամսաթիվն այս դեպքում ոչինչ չի ապացուցում: Կարևորն այն հարցադրումն է, որ առաջադրել էր «Հյուսիսափայլի» խմբագրությունը՝ վերաշարադրելով Վարչամյանցի նամակը. այդ հարցադրումը կապված էր անցյալ դարի 60-ական թթ. ժամանակաշրջանի հայ իրականության ամենակենսական հարցերից մեկի՝ գրական հայերենի դարգացման ուղիների պարզաբանման հետ:

1860 թ. հունիսին Մսերյանները տարածում են «Ճռաքաղի» հրատարակությունը վերսկսելու վերաբերյալ իրենց պաշտոնական ծանուցումը (ամսագիրը չէր հրատարակվում հունվարից): Ծանուցման լեզուն առաջին առիթն է տալիս խոսելու «Ճռաքաղի» լեզվի «ավերիչ» հետևանքների մասին: Երկրորդ պատճառը՝ ամսագիրը օգոստոսից-օգոստոս հրատարակելու գաղափարն էր: Ընդունված կարգի համաձայն յուրաքանչյուր թերթ սկսում է հրատարակվել տարեսկզբից, բայց Մսերյանները վստահ չլինելով, որ անհրաժեշտ քանակություն մեծանորդներ կկարողանային ունենալ, ընտրում են «հարմար» մի ամիս, երբ հարևան թերթերի մրցակցության «վտանգը» հասնում էր նվազագույնի:

Մեր կարծիքով, այս օրերին, հունիսի 16-ից մինչև հուլիսի 6-ը գտնվելով Մոսկվայում, Նալբանդյանը, Նաղարյանի հետ մեկտեղ, նախապատրաստել է մի հոդված, որը պետք է ընթերցողներին կողմնորոշում տար «Ճռաքաղի» ուղղության և լեզվի վերաբերյալ: Այդ հոդվածի համար իբրև հիմք նրանք հավանաբար ընդունել են Վարչամյանցի նամակը՝ ուղղված խմբագրությանը, որը փոխվել է անճանաչելի լինելու աստիճան թե՛ «բառերի» և թե՛ «իմաստի» առումով, ինչպես վկայում է Ռոստոմյանցը²⁰: Ամսաթիվը նույնպես փոխվել է այն հաշվով, հավանաբար, որ Նալբանդյանը հեռացվի նամակի հետ առնչություն ունենալուց (նա հուլիսի 6-ին պետք է մեկներ Մոսկվայից): Բայց եթե մի պահ ընդունելու լինենք, որ նամակը գրել է Վարչամյանցը օգոստոսի 12-ին, ապա այն հաղիվ թե հասնել Մոսկվա, ուսումնասիրվել տեղում և Նաղարյանի ծավալուն ծանոթագրություններով պատրաստվել տպագրության № 11-ի համար: Չէ՞ որ այդ համարի արդեն պատրաստի նյութերը Պետերբուրգում գրաքննության կողմից թույլատրվել էին տպագրության սեպտեմբերի 6-ին, իսկ դատելով Ռոստոմյանցի նամակի անցած ճանապարհից (դեկտեմբերի 23-ի նամակը Մոսկվա էր հասել հունվարի 17-ին), Վարչամյանցի նամակը լավագույն դեպքում կարող էր Մոսկվա հասնել օգոստոսի վերջին:

Ինչ վերաբերում է Ռ. Նանումյանի այն դիտողությանը, թե Վարչամյանցի նամակում արժարժված խնդիրը «ոչ մի կապ չունի աշխարհաբարի մասին Նալբանդյանի ունեցած պատկերացումների և մշակած սկզբունքների հետ».

²⁰ Ուղադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ Ռոստոմյանցը, գրելով հանդերձ, թե տպագրված նամակը Վարչամյանցինը չէ, չի նշում, թե Վարչամյանցն առհասարակ նամակ չի ուղղել «Հյուսիսափայլի»։ Նա սոսկ արձանագրում է կատարված փաստը. նամակի բառերը և իմաստը Վարչամյանցինը չեն։

ապա, կարծում ենք, այդ եզրակացությունը շտապողականության կնիք է կրում: Նալբանդյանի լեզվական հայացքները, նրա ասույթները և այդ հարցին նվիրված հոդվածներն իրենցից ներկայացնում են լեզվագիտական մի բարդ սիստեմ, որի քննությունը մասնագիտական առավել լուրջ պայմաններ է ենթադրում:

Եվ այսպես, Սարգիս Վարշամյանցի նամակը ծրագրային մի փաստաթուղթ է, որով «Հյուսիսսփայլի» խմբագրությունը հրկու հարց էր լուծում: Նախ, իսկապես բարոյական պատասխանատվություն կրելով ժամանակի հայ պարբերականների լեզվի համար, խմբագրությունը բացահայտում էր «Ճռաքաղի» խմբագիրն էրի լեզվական քաղաքականության սնունդությունը: Բանն այն էր, որ աշխարհիկ գրական լեզուն նոր միայն կազմավորվում էր և «Հյուսիսսփայլի» գործիչները խիստ զգայուն էին այդ լեզվի նկատմամբ ցուցաբերվող անփութությունների հանդեպ: Այս առումով լուրջ տազնապների տեղիք էր տալիս «Ճռաքաղի» ծանուցման լեզուն, որը իբրև ամսագրի լեզու, կարող էր անուղղելի գեր կատարել «Հյուսիսսփայլի» լեզվական ձեռքբերումները վտանգելու գործում²¹:

Երկրորդ խնդիրը «Հյուսիսսփայլի» դիրքորոշման պարզաբանումն էր գրական լեզվի զարգացման հարցում: Այստեղ է, որ հարցի քննարկմանը միջամտում է լեզվաբանական լուրջ գիտելիքների տեր Ստ. Նազարյանը, որը տողատակի ծանոթությունների ձևով մի ամբողջ գիտական տրակտատ է հրամեցրելու ընթերցողին: Սակայն, որովհետև այս նամակում քննարկվում էին այնպիսի խոշոր պրոբլեմներ, ինչպիսիք էին գրաբարի և աշխարհաբարի հնության և ապրած էվոլյուցիայի հարցը, գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերության և ունեցած կշռի հարցը XIX դարում, աշխարհիկ գրական լեզվի զարգացման ուղիների ճշգրտումը, ապա առաջին հայ լուսավորիչների և լեզվաշինարարների հայացքները նույնպես որոշ կետերում չէին համընկնում: Սա միանգամայն օրինաչափ երևույթ է և պատմական դարաշրջանի ոգու արտահայտությունը: Պրոբլեմի լուծման ուղիներն այնքան բարդ էին և հակասական, որ Նազարյանի և Նալբանդյանի հայացքները նույնպես չէին կարող միանշանակ լինել: Զպետք է մոռանալ, որ նրանց քննության առարկան մի խնդիր էր, որը հետագա տասնամյակներում ևս, ընդհուպ մինչև մեր օրերը, մնացել է լեզվաբանների ուղղորդության կենտրոնում և առիթ տվել բազմաթիվ վեճերի:

Այսպիսով, մեր համոզմունքով, «Հյուսիսսփայլի» թղթակից Վարշամյանցը հաղիվ թե համարձակություն ունենար հրապարակային պայքարի ասպարեզն իջնելու իբրև լեզվի զարգացման հարցում որոշակի կազմակերպված տեսակետի պաշտպան և հակառակ թևի տեսակետները մերժող կողմ: Մենք նույնպես գտնում ենք, որ Վարշամյանցի նամակը գրված է բանավիճային այնպիսի ցայտուն ձեռագրով, նոր զարգացող աշխարհաբարի դատի պաշտ-

21 Ահա մի հատված Մսերյանների տարածած ծանուցումից, որը մեզ է բերված և Վարշամյանցի նամակում, և որի լեզուն, նամակագրի արտահայտությամբ, «ոչ գրաբար է, ոչ աշխարհաբար, այլ մի ինքնահնար, անկանոն լեզու»։ «Ի նոյեմբեր ամսեան անցեալ 1859 ամի, մեզ ծանուցած էաք՝ թէ «Ճռաքաղ» բանասիրական ամսագրի տպագրութիւնն առժամանակ մի լուծուար ամսոյ ներկայ տարւոյս պիտի դադարի, և թէ զկնի քանի մի ամսոց լի սկսանիլ Կրկին անգամ հրատարակութեան նորին, ունիմք առանձին Յայտարարութեամբ ծանուցանել մեր ամենասիրելի Համազգեացաք։

պանության այնպիսի նպատակաւարացութեամբ և կրքով, որ հազիւ թե դրա հեղինակը լինէր թեկուզ և առաջադիմական հայացքների տեր և զարգացած մի անձնավորություն, ինչպիսին էր «Հյուսիսափայլի» Բաբվի թղթակիցը:

Սակայն հարկ է ավելացնել, որ նամակը թեև պատկանում է նալբանդյանի գրչին, բայց նազարյանի ծանոթություններն այնպիսի գիտական կշիռ և ծավալ ունեն (հավասար բուն բնագրին), որ նամակը ամենայն իրավամբ ձեռք է բերում երկու հեղինակի կոլեկտիվ աշխատանքի նշանակություն:

Ինչպես արդեն առիթ ունեցանք նշելու, ձեռքի տակ ունենալով առաջին հիմքը՝ Վարշամյանցի նամակը, «Հյուսիսափայլի» խմբագիրը և գլխավոր աշխատակիցը հնարավորություն են ստացել իրենց ելույթը քողարկելու այդ նամակի հեղինակի անվան տակ, ստեղծելու համար այն պատրանքը, թե ժամանակի հրատապ հարցերի շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը՝ «Հյուսիսափայլի» դիրքերից մասնակցում էին նաև ժամանակի մաավորակա-նություն ներկայացուցիչները:

ЕЩЕ РАЗ ПО ПОВОДУ ПИСЬМА САРГИСА ВАРШАМЯНЦА

Кандидат филол. наук М. А. МХИТАРЯН

(Резюме)

В журнале «Юсисапайл» (1860, № 11) за подписью С. Тер-Микаелян Варшамянца было напечатано письмо «графу Эммануэлу» (М. Налбандяну). Редакция академического издания произведений М. Налбандяна, сочтя фамилию Варшамянц псевдонимом Налбандяна, включила письмо во II том его произведений (1948 г.). Впоследствии Р. Нанумян в статье «Восстановление одного важного факта» («Историко-филологический журнал», 1964, № 3) доказала, что фамилия Варшамянц не псевдоним Налбандяна, а принадлежит бакинскому жителю Варшамянцу, который участвовал в общественной жизни города Баку.

Изучение вопроса убедило нас в том, что письмо, хотя и было напечатано за подписью Варшамянца, не могло принадлежать обыкновенному корреспонденту журнала, каким являлся Варшамянц. На основании новых фактов, приведенных в статье, делается предположение, что письмо было составлено главным сотрудником журнала «Юсисапайл» Налбандяном с помощью редактора Назаряна, который своими развернутыми комментариями как бы завершил обсуждение поднятых в письме вопросов. Приведенные нами факты показывают, что и языковые, и стилистические особенности письма характерны для Налбандяна. Кроме того, Варшамянц сам, ознакомившись с № 11 «Юсисапайла», признал, что «ни по стилю, ни по смыслу» письмо не принадлежит ему. Мы полагаем, что Варшамянц мог написать письмо в редакцию «Юсисапайла». Однако редакция журнала на основе этого письма создала совершенно новый документ, с помощью которого обосновала проблемы, связанные с путями развития новоармянского языка.